

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

►B

ԽՈՐՀՐԴԻ 1992 թվականի սեպտեմբերի 22-ի 92/75/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳ
Կենցաղային տեխնիկայի կողմից սպառվող էներգիայի և այլ ռեսուրսների
վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի մասին ստանդարտ
տեղեկությունների միջոցով նշում կատարելու մասին

(ՊՏ L 297, 13.10.1992թ., էջ 16)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		թիվ	էջ	ամսաթիվ
<u>M1</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 L 284 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով	1		31.10.2003
<u>▼M2</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 L 311 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1137/2008(ԵՀ) կանոնակարգով	1		21.11.2008

▼B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը, և մասնավորապես, դրա 100ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ ներքին շուկա ձևավորելուն ուղղված միջոցներ պետք է ձեռնարկվեն մինչև 1992 թվականի դեկտեմբերի 31-ը,

քանի որ որոշ անդամ պետություններ արդեն ունեն սեփական կամավոր հիմունքներով համակարգերը կենցաղային տեխնիկայի համար էներգապիտակավորման և սպառվող էներգիայի վերաբերյալ այլ տեղեկություններ տրամադրելու համար. քանի որ մեկ անդամ պետություն պաշտոնապես առաջարկել է ներկայացնել պիտակավորման իր պարտադիր համակարգը, իսկ մնացած անդամ պետությունները մտածում են այդ առաջարկի շուրջ. քանի որ որոշ պարտադիր ազգային համակարգերի առկայությունը խոչընդոտներ կստեղծի ներհամայնքային առևտրի համար,

քանի որ Պայմանագրի 130Ժ հոդվածով պահանջվում է բնական ռեսուրսների խելամիտ և ռացիոնալ օգտագործումը. քանի որ էներգիայի ռացիոնալ օգտագործումը հիմնական միջոցներից մեկն է, որի միջոցով կարելի է իրականացնել այդ նպատակը և նվազեցնել շրջակա միջավայրի աղտոտումը,

քանի որ կենցաղային տեխնիկայի կողմից կոնկրետ էներգասպառման մասին ճշգրիտ, համապատասխան ու համեմատելի տեղեկություններ տրամադրելու միջոցով կարելի է ազդել սպառողների վրա, որոնք կընտրեն այնպիսի տեխնիկա, որն օգտագործման ընթացքում սպառում է ավելի քիչ էներգիա՝ այդպիսով ստիպելով արտադրողներին քայլեր ձեռնարկել իրենց կողմից արտադրվող տեխնիկայի էներգիայի սպառումը կրճատելու ուղղությամբ. քանի որ դա նաև անուղղակիորեն կխթանի այդ տեխնիկայի արդյունավետ օգտագործումը. քանի որ այդպիսի տեղեկությունների բացակայության դեպքում՝ միայն շուկայական ուժերի գործունեությամբ անհնար կլինի խթանել այդ տեխնիկայի համար էներգիայի ռացիոնալ օգտագործումը,

քանի որ տեղեկատվությունն առանցքային նշանակություն ունի շուկայական ուժերի գործունեության հարցում. ուստի, անհրաժեշտություն է առաջանում միևնույն տեսակի տեխնիկայի բոլոր տեսակների համար ներմուծել մեկ միասնական պիտակ՝ պոտենցիալ գնորդներին տրամադրելով ստանդարտացված լրացուցիչ տեղեկություններ այդ տեխնիկայի ծախսերի մասին՝ կապված էներգիայի և այլ ռեսուրսների սպառման հետ և միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու, որ այն պոտենցիալ գնորդները, ովքեր չեն տեսնում

ցուցադրված տեխնիկան, հետևաբար չունեն նաև պիտակը տեսնելու հնարավորություն, նույնպես ստանան այդ տեղեկությունները,

քանի որ այդ նպատակով տեխնիկայի յուրաքանչյուր տեսակի էներգասպառումը և դրանց մասին այլ տեղեկություններ պետք է ստուգվեն ներդաշնակեցված ստանդարտներին ու մեթոդներին համապատասխան, իսկ այդ ստանդարտների ու մեթոդների կիրառումը պետք է դիտանցվի շուկայավարման փուլում,

քանի որ 79/530/ԵՏՀ հրահանգը (4) փորձեց խթանել այդ նպատակները կենցաղային տեխնիկայի մասով. քանի որ, այնուամենայնիվ, ընդունվել է միայն մեկ կիրարկող հրահանգ էլեկտրական ջեռոցների վերաբերյալ, իսկ այդ պիտակը ներկայացրել են մի քանի անդամ պետություններ. քանի որ այդ պատճառով անհրաժեշտ է դասեր քաղել ձեռքբերված փորձից և ամրապնդել այդ Հրահանգի դրույթները. քանի որ, հետևաբար, 79/530/ԵՏՀ հրահանգը պետք է փոխարինվի, իսկ այդ էլեկտրական ջեռոցների նկատմամբ կիրառվող 79/531/ԵՏՀ հրահանգը (5) պետք է վերանայվի և այնուհետև ներառվի առկա համակարգի մեջ,

քանի որ ամբողջովին կամավոր հիմունքներով համակարգը կարող է հանգեցնել նրան, որ պիտակավորվեն միայն տեխնիկայի որոշ տեսակներ կամ տրամադրվեն արտադրանքի մասին ստանդարտ տեղեկություններ, որի հետևանքով սպառողների մոտ կարող է առաջանալ շփոթմունք կամ նույնիսկ ապատեղեկատվություն,

քանի որ կենցաղային տեխնիկան օգտագործում է էներգիայի բազմաթիվ տեսակներ, որոնցից ամենակարևորը էլեկտրականությունն ու գազն են. քանի որ, ուստի, սույն Հրահանգով պետք է հիմնականում կարգավորվի էներգիայի ցանկացած տեսակ օգտագործող տեխնիկա,

քանի որ «Կենցաղային տեխնիկայի կողմից արձակվող և օդով տարածվող աղմուկի մասին» Խորհրդի 1986 թվականի դեկտեմբերի 1-ի հրահանգով (6) նախատեսվում է էներգաարդյունավետության պիտակների վրա, հարկ եղած դեպքում, ներառել նշում աղմուկի արձակման վերաբերյալ. քանի որ, հետևաբար, պետք է դրույթ նախատեսվի Համայնքի համակարգերով կարգավորվող ցանկացած այլ տեղեկությունների և պիտակավորման ներմուծման մասին,

քանի որ պետք է ներառվեն տեխնիկայի միայն այն տեսակները, որոնց կողմից օգտագործվող էներգիայի ծավալն էական է, և որոնք առաջարկում են արդյունավետության բարձրացման համարժեք շրջանակ,

Հոդված 1

1. Սույն Հրահանգի նպատակն է հնարավոր դարձնել հրապարակման մասին ազգային ակտերի ներդաշնակեցումը, մասնավորապես, պիտակավորման և արտադրանքի, էներգասպառման ծավալների և այլ էական ռեսուրսների սպառման մասին տեղեկություններ, ինչպես նաև որոշակի տեսակի կենցաղային տեխնիկայի մասին լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու միջոցով՝ այդպիսով սպառողներին տալով առավել էներգաարդյունավետ տեխնիկայի ընտրության հնարավորություն: Սույն Հրահանգը կիրառվում է կենցաղային տեխնիկայի հետևյալ տեսակների նկատմամբ, նույնիսկ եթե դրանք նախատեսված են ոչ կենցաղային օգտագործման համար.

- սառնարաններ, սառցարաններ և դրանց համակցումը հանդիսացող սարքեր,
- վաացքի մեքենաներ, չորացման սարքեր և դրանց համակցումը հանդիսացող սարքեր,
- սպասք վաացող մեքենաներ,
- ջեռոցներ,
- ջրատաքացուցիչներ և տաք ջրի պահման համար նախատեսված սարքեր,
- լուսավորման աղբյուրներ,
- օդորակման համակարգեր:

▼M2

2. Սույն հոդվածում նշված ցուցակին կարող են ավելացվել կենցաղային տեխնիկայի այլ տեսակներ: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն 10(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

3. Սույն Հրահանգը չի կիրառվում կենցաղային տեխնիկայի անվտանգության նկատառումներով կցված տեխնիկական անձնագրի կամ համարժեք փաստաթղթի նկատմամբ:

4. Սույն Հրահանգի նպատակներով՝

- դիլեր՝ մանրածախ առևտրով զբաղվող անձ կամ անձինք, ով վերջնական օգտագործողներին վաճառում, վարձակալում, ապառիկ պայմաններով առաջարկում կամ ցուցադրում է կենցաղային տեխնիկա.
- մատակարար՝ արտադրողը կամ Համայնքում նրա լիազորված ներկայացուցիչը կամ Համայնքում արտադրանքը շուկայահանող անձը.
- տեղեկատվական թերթիկ՝ տվյալ տեխնիկայի վերաբերյալ տեղեկությունների ստանդարտ աղյուսակ.
- այլ էական ռեսուրսներ՝ ջուր, քիմիական կամ այլ նյութեր, որոնք աշխատանքի նորմալ պայմաններում սպառում է սարքավորումը.
- լրացուցիչ տեղեկություններ՝ սարքավորման/տեխնիկայի բնութագրի մասին այլ տեղեկություններ, որոնք վերաբերում են էներգիայի կամ էական ռեսուրսների օգտագործմանը կամ օգտակար են դրա գնահատման համար:

5. Պարտադիր չէ պիտակավորել կամ տրամադրել տեղեկաթերթիկներ օգտագործված տեխնիկայի կամ տեխնիկայի այն մոդելների վերաբերյալ, որոնք դադարել են արտադրվել մինչև համապատասխան կիրարկող հրահանգի ուժի մեջ մտնելը:

Հոդված 2

1. Էլեկտրաէներգիայի, էներգիայի այլ ձևերի, այլ էական աղբյուրների սպառման մասին տեղեկություններ և լրացուցիչ տեղեկություններ պետք է հանձնվեն սպառողների ուշադրությանը վերջնական սպառողներին վաճառքի համար, վարձակալության, ապառիկ պայմաններով վաճառքի համար առաջարկվող կամ ցուցադրվող կենցաղային տեխնիկայի մասին տեղեկաթերթիկների ու պիտակների միջոցով:

▼M2

2. Պիտակին և տեղեկաթերթիկին վերաբերող մանրամասն տեղեկությունները պետք է սահմանվեն տեխնիկայի յուրաքանչյուր տեսակին վերաբերող՝ սույն Հրահանգին համապատասխան ընդունված հրահանգներով: Լրացումների միջոցով սույն հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 10(2)

հողվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

3. Պետք է մշակվեն տեխնիկական փաստաթղթեր, որոնք հնարավորություն կտան ստուգելու պիտակում և տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունների ճշգրտությունը: Այն պետք է ներառի.

– տվյալ արտադրանքի ընդհանուր նկարագիրը.

– անհրաժեշտության դեպքում, նախագծման ընթացքում կատարված հաշվարկների արդյունքները.

– առկայության դեպքում՝ փորձաստուգման հաշվետվությունները, այդ թվում՝ ներկայացված համապատասխան կազմակերպությունների կողմից կատարված փորձաստուգումների հաշվետվությունները, ինչպես սահմանված է Համայնքի այլ օրենսդրությամբ.

– եթե համանման մոդելների համար օգտագործվում են արժեքներ, ապա նույն տեղեկություններն այդ մոդելների համար:

4. Մատակարարը պետք է մշակի 3–րդ պարբերությունում նշված տեխնիկական փաստաթղթերը: Այդ նպատակով այն կարող է օգտվել Համայնքի համապատասխան օրենսդրության հիման վրա արդեն պահանջված փաստաթղթերից: Մատակարարը տեխնիկական փաստաթղթերը տրամադրում է ստուգումների նպատակով վերջին արտադրատեսակի արտադրությունից հետո հինգ տարի ժամկետով:

Հոդված 3

1. Կիրարկող հրահանգներով սահմանված կենցաղային տեխնիկական շուկայահանող բոլոր մատակարարները պետք է պիտակներ մատակարարեն՝ համաձայն սույն Հրահանգի: Օգտագործվող պիտակները պետք է բոլոր դեպքերում համապատասխանեն սույն Հրահանգին և կիրարկող հրահանգներին:

2. Պիտակներից բացի, մատակարարները պետք է տրամադրեն նաև արտադրանքի տեղեկաթերթիկներ: Արտադրանքի մասին բոլոր բրոշյուրները պետք է պարունակեն նման

տեղեկաթերթիկներ: Եթե մատակարարը չի տրամադրում արտադրանքի մասին բրոշյուրներ, նա պետք է տեղեկաթերթիկներ ներկայացնի տեխնիկայի հետ տրամադրվող այլ գրականության հետ: Օգտագործվող տեղեկաթերթիկները պետք է բոլոր դեպքերում համապատասխանեն սույն Հրահանգին և կիրարկող հրահանգներին:

3. Մատակարարները պատասխանատվություն են կրում իրենց կողմից ներկայացվող պիտակների ու տեղեկաթերթիկների ճշգրտության համար:

4. Համարվում է, որ մատակարարը սվել է իր համաձայնությունը պիտակի վրա կամ տեղեկաթերթիկում ներկայացված տեղեկությունների հրապարակման համար:

Հոդված 4

Պիտակավորման և արտադրանքի մասին տեղեկությունների մասով կիրառվում են հետևյալ դրույթները:

ա) կիրարկող հրահանգում նշված տեխնիկա ցուցադրելիս դիլերները պետք է համապատասխան պիտակը փակցնեն համապատասխան կիրարկող ակտով սահմանված հստակորեն տեսանելի տեղում, իսկ տեղեկությունները շարադրեն համապատասխան լեզվով,

բ) մատակարարը պետք է (ա) պարբերությունում նշված անհրաժեշտ պիտակներն անվճար տրամադրի դիլերներին: Մատակարարներն իրենք են ընտրում պիտակներ տրամադրելու իրենց համակարգը: Այնուամենայնիվ, եթե դիլերը դիմում է պիտակներ ստանալու համար, մատակարարը պետք է ապահովի, որ պահանջվող պիտակներն անհապաղ տրամադրվեն նրան:

Հոդված 5

Եթե համապատասխան սարքավորումներ են պահանջվում վաճառքի, վարձակալության կամ տարածամկետ վաճառքի համար փոստով, կատալոգով կամ առևտրի այլ եղանակներով, որը ենթադրում է, որ պոտենցիալ հաճախորդը չի կարող տեսնել սարքավորումը ցուցադրված, կիրարկող հրահանգներով պետք է սահմանվեն դրույթներ, որոնք կապահովեն, որ պոտենցիալ հաճախորդները նախքան ապրանքը գնելը ստանան պիտակի վրա կամ տեղեկաթերթիկում պարունակվող էական տեղեկությունները:

Հոդված 6

Կիրարկող հրահանգներով պետք է սահմանվեն դրույթներ պիտակի վրա կամ տեղեկաթերթիկում օդով տարածվող աղմուկի վերաբերյալ տեղեկությունների ներառման մասին, եթե այդպիսի տեղեկությունները տրամադրվում են 86/594/ԵՏՀ հրահանգին համապատասխան, կամ համապատասխան սարքավորումներին վերաբերող հանրությանը տրամադրվող այլ տեղեկություններ, որոնք տրամադրվում են Համայնքի այլ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 7

Անդամ պետությունները անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում ապահովելու համար որ.

ա) իրենց տարածքում գործող բոլոր մատակարարներն ու դիլերները իրականացնեն սույն Հրահանգով սահմանված իրենց պարտականությունները,

բ) արգելվում է այնպիսի պիտակների, նշանների, խորհրդանշանների կամ նշագրերի ցուցադրումը, որոնք չեն բավարարում սույն Հրահանգով կամ համապատասխան կիրարկող հրահանգներով սահմանված պահանջները, եթե դրանց ցուցադրումը կարող է մոլորեցնել կամ շփոթեցնել հաճախորդներին: Այդ արգելումը չի կիրառվում շրջակա միջավայրի հետ կապված պիտակավորման Համայնքի կամ ազգային համակարգերի նկատմամբ,

գ) էներգիայի սպառման կամ ռացիոնալ օգտագործման մասին պիտակների և տեղեկաթերթիկների համակարգի ներմուծումը ուղեկցվում է կրթական և գովազդային բնույթի տեղեկատվական քարոզարշավներով, որոնց նպատակն է նպաստել առանձին հաճախորդների կողմից էներգիայի առավել պատասխանատու օգտագործմանը:

Հոդված 8

1. Եթե սույն Հրահանգի և կիրարկող հրահանգների դրույթները բավարարված են, անդամ պետությունները չպետք է արգելեն կամ սահմանափակեն կիրարկող հրահանգով կարգավորվող կենցաղային տեխնիկայի շուկայահանումը:

2. Հակառակն ապացուցող փաստերի բացակայության դեպքում անդամ պետությունները համարում են, որ պիտակներն ու տեղեկաթերթիկները համապատասխանում են սույն Հրահանգի և կիրարկող հրահանգների դրույթներին: Անդամ պետությունները

մատակարարներից կարող են պահանջել փաստեր տրամադրել 2-րդ հոդվածի իմաստով՝ պիտակներում կամ տեղեկաթերթիկներում պարունակվող տեղեկությունների ճշգրտության վերաբերյալ, եթե հիմքեր ունեն կասկածելու, որ այդ տեղեկությունները ճիշտ չեն:

▼M2

Հոդված 9

Հանձնաժողովը պետք է ընդունի և համապատասխանի տեխնիկական առաջընթացին, համակարգի ստեղծմանն ու գործարկմանն առնչվող ակտերին՝ հրահանգներ կիրարկելով և 1(1) հոդվածում նշված ցուցակին այնպիսի կենցաղային տեխնիկա ավելացնելով, որոնց դեպքում հնարավոր է հասնել էներգիայի էական խնայողության:

Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 10(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 10

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-ից մինչև (4)-րդ և 7-րդ հոդվածները կիրառվում են՝ հաշվի առնելով որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 11

Սույն Հրահանգի կիրառման երեք տարի ժամանակահատվածից հետո Հանձնաժողովը պետք է գնահատի դրա կիրարկումը և ձեռքբերված արդյունքները: Գնահատման մասին պետք է հաշվետվություն ներկայացվի Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ:

Հոդված 12

Կիրարկող հրահանգներով պետք է սահմանվի.

ա) ներառվող տեխնիկայի ճշգրիտ սահմանումը,

բ) չափման չափանիշներն ու մեթոդները, որոնք օգտագործվում են 1(1) հոդվածում նշված տեղեկությունները ձեռք բերելիս,

գ) 2 (3) հոդվածի համաձայն պահանջված տեխնիկական փաստաթղթերի մանրամասն տեղեկությունները,

դ) 2-րդ հոդվածում նշված պիտակի ձևն ու բովանդակությունը, որը, հնարավորության դեպքում, պետք է ունենա ձևի միասնական հատկանիշներ,

ե) սարքավորման վրա ամրացվող պիտակի տեղը: Անհրաժեշտության դեպքում, կիրարկող հրահանգներով նախատեսվում է, որ պիտակը ամրացվի կամ տպվի փաթեթվածքին,

զ) տեղեկաթերթիկի կամ 3-րդ և 2(գ) հոդվածում նշված այլ տեղեկությունների բովանդակությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ձևաչափը և դրանց վերաբերող այլ մանրամասներ: Պիտակի վրա առկա տեղեկությունները ներառվում են նաև տեղեկաթերթիկում,

է) տրամադրվող տեղեկությունները, ինչպես կարգավորված է 5-րդ հոդվածով, և տեղեկությունների տրամադրման եղանակը:

Հոդված 13

Սույնով 79/530/ԵՏՀ հրահանգը ուժը կորցրած է ճանաչվում 1994 թվականի հունվարի 1-ից:

79/531/ԵՏՀ հրահանգը պետք է համարվի էլեկտրական ջեռոցների մասով սույն Հրահանգը կիրարկող հրահանգ. այդուհանդերձ, անդամ պետությունները կարող են զերծ մնալ դրա պարտադիր ներմուծումից մինչև ջեռոցների մասով՝ վերանայված կիրարկող հրահանգով սահմանված ժամկետի լրանալը՝ 10-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

Հոդված 14

1. Անդամ պետությունները պետք է ընդունեն և հրապարակեն սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ իրավական ակտերը մինչև 1993 թվականի հուլիսի 1-ը: Նրանք պետք է այդ իրավական ակտերի մասին անմիջապես տեղեկացնեն Հանձնաժողովին:

Նրանք այդ դրույթները գործողության մեջ են դնում ոչ ուշ քան մինչև 1994 թվականի հունվարի 1-ը:

2. Երբ անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

3. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին ներկայացնեն ներպետական իրավունքի հիմնադրույթները, որոնք ընդունվում են իրենց կողմից սույն հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 15

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

(1) ՊՏ թիվ C 235, 10.09.1991թ., էջ 5:

(2) ՊՏ թիվ C 125, 18.05.1992թ., էջ 172 և

ՊՏ թիվ C 241, 21.09.1992թ.:

(3) ՊՏ թիվ C 49, 24.02.1992թ., էջ 32:

(4) ՊՏ թիվ L 145, 13.06.1979թ., էջ 1:

(5) ՊՏ թիվ L 145, 13.06.1979թ., էջ 7:

(6) ՊՏ թիվ L 344, 06.12.1986թ., էջ 24: